Սաթենիկ Կարապետյան
ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետ, 3-րդ կուրս
Գիտ. ղեկ.՝ բ. գ. թ., դոց. Ս. Սրապիոնյան
էլ. փոստ՝ satenik1992@inbox.ru

Ռ. ՊԱՏԿԱՆՅԱՆԻ «ԵՍ ՆՇԱՆԱԾ ԷԻ» ՎԻՊԱԿԻ ՇՈՒՐՋ

Ուսանողական տարիները Դորպատում ու ապա Պետերբուրգում Պատկանյանի մոտ վառ ու անմոռաց հուշեր ու տպավորություններ էին թողել, որոնք և հիմք դարձան նրա՝ ուսանողական կյանքը պատկերող արձակ ու չափածո ստեղծագործությունների համար: Պատկանյանը, լինելով լիարժեք ուսանող, շատ լավ հասկանում էր ուսանողների անհոգ և միաժամանակ հոգսաշատ կյանքը: Ուսանողական հավաքույթներ ու քեֆեր, անմեղ սիրահարություններ, ապագայի նկատմամբ ունեցած հավատ, իր ժողովրդին, մարդկությանը օգտակար լինելու ցանկություն. ահա որն է բնորոշ իսկական ուսանողին: Սակայն իրական կյանքն իր ճնշող, ապականող մթնոլորտով կտրում է նրանց հոգու թևերը, զրկում ճախրելու հնարավորությունից: Օրվա հացը վաստակելու դառն անհրաժեշտությունը ստիպում, պարտադրում է նրանց տարիներով կազմած համոզմունքը, իդեալը ոտնակոխ անել:

Եվ ահա Պատկանյանը իր երկու վիպակներում («Ես նշանած էի», «Տիկին և նաժիշտ») պատկերեց ազնիվ և անկաշառ ուսանող երիտասարդների, որոնք մինչև վերջ հավատարիմ են կյանքի, մարդու նկատմամբ ունեցած իրենց հավատավոր հայացքներին: 1880 թ. «Փորձ»-ում լույս տեսավ «Ես նշանած էի» վիպակը:

Հեղինակը վիպակն անվանում է «ճշգրիտ անցք իմ հիշատակարանից», իրական մարդկանց անուններ է տալիս, հերոսի անունը՝ Վայելչյան, Պատկանյանի գրական կեղծանուններից մեկն է: Շատ հնարավոր է, որ վիպակին նյութ է ծառայել հեղինակի երիտասարդական տարիների սիրահարություններից մեկը: Այն, որ վիպակն ունի կենսագրական շերտեր, տեսնում ենք նաև այն դրվագում, երբ հերոսը՝ Միքայելը, Մոսկվայի իր ընկերներից ստանում է 30 ռուբլի: «Փողը Գ.Ք. և Մ.Թ. բարեկամներես էր»[1],- նշում է Միքայելը. հասկանալի է, որ խոսքը հայտնի Գամառ-Քաթիպայի անդամների՝ Գևորգ Քանանյանի և Մնացական Թիմուրյանի մասին է:

Վիպակում կատարված դեպքերի մասին պատմում է հերոսը՝ Միքայելը՝ ընթերցողին վարակելով ջերմությամբ ու անմիջականությամբ:

185. թ (հեղինակը կոնկրետ տարին չի նշում. հասկանալի է, որ խոսքը 50-ական թվականների մասին է) ցուրտ ձմեռը մի կատարյալ փորձանք էր Պետերբուրգի բնակչության համար: «Այս այն չարաշուք ձմեռն էր, երբ քաղաքումս գռիփ ցավը և խոլերան իրար հետ դաշնակից էին դարձել և սաստիկ կոտորած էին անում սոսկացած ժողովրդի մեջ: Եթե մարդը համբերություն ունենար կանգնելու նորաշեն քարե կամրջի վրա (որ քաղաքը Վասիլի կղզիի հետ միավորվում է) և առավոտից մինչև մթնակոխը մնար այնտեղ՝ հավատացած եմ, որ մինչև երկու հարյուր հուղարկավորություն կհամրեր զանազան աստիճանի և կոչման մեռելներու»[2],- բացատրում է Պատկանյանը և ընդգծում. «Բայց մանավանդ մեռնող աղքատներու թիվը շատ էր այս ձմեռ»[3]: Պատումի հենց սկզբից բացահայտվում է Պատկանյանի նկարագրման առանձնահատկություններից մեկը: Առաջին հայացքից նա կարծես ոչինչ չի ասում այն միջավայրի մասին, որի մեջ ապրում ու գործում են հերոսները:

[1] Պատկանյան Ռ., Երկեր, Երևան, 1955, էջ 352:
[2] Նույն տեղում, էջ 315:
[3] Նույն տեղում:

Իրականում այդ ամենը արտահայտվում է սեղմ ու ժլատ նկարագրություններում, հարևանցի դիտողություններում: Մյուս կողմից՝ հերոսների ներաշխարհն այն մեկնակետն է, որից նա հասնում է տիրող հարաբերությունների արտացոլմանը: Հենց միայն հարուստների և աղքատների թաղման նկարագրությունը բավարար է՝ ցույց տալու այն ահավոր խտրականությունը, որ բաժանում է հասարակության անդամներին:

Մահը, որ թվում է, թե հավասարեցնում է բոլոր մահկանացուներին, անուժ է այս դեպքում: Մահը դարձել է սովորական երևույթ, առօրյայի մի մասը, հոգևորականներն անգամ չունեն ժամանակ՝ մարդկանց թաղելու համար: Նրանք պարզապես իրենց պարտքն են կատարում: «Ո՞ր մեկիդ հասնեմ... համբերեցեք, կամ եթե ավելի լավը ուզում եք՝ ինքներդ առանց ինձ թաղեցեք, ես հետո կուգամ և կկարդամ հանգստյան աղոթքը. մի՞թե չեք տեսնում, որ ժամանակը ստիպողական է...»[1]:

Եվ ահա այդքան սովորական տիրույթում Վայելչյանը հանկարծ հանդիպում է իր տեսակին՝ Մարիին: Ավելի շատ կարեկցությունից, քան թե նրա գեղեցկությամբ հափշտակված՝ Միքայելը հետևում է այդ աղջկան, ապա սիրահարվում պատանեկան մաքուր ու անշահախնդիր սիրով: Նրանց կապում է նաև մի շատ կարևոր բան. երկուսն էլ օտար էին այդ ցուրտ ու հեռավոր երկրում: «Ո՞վ պիտի տար մեզ մեր կանաչ դաշտերը, մեր ազատ սարերը, մեր խոխոջուն վտակը, մեր անամպ ու կապուտակ երկինքը և վերջապես՝ մեր հյուրասեր և մարդասեր ժողովուրդը»[2],- մորմոքում է Մարին: Այս խոսքերը Միքայելի մեջ արթնացնում են իր հայրենի երկրի վերհուշը. «Այս խոսքերը լսելիս միտքս եկավ մեր սիրուն Հայաստանը, որ միայն գրքերից էի ճանաչում»[3]:

Վայելչյանը մեկն է այն բարձր բնավորություններից, որոնց երջանկությունը ուրիշների երջանկության մեջ է: Նա չի կարող երջանիկ լինել, երբ շուրջը դժբախտներ կան: Բայց նա նյութական ծանր վիճակում է, ավելի ճիշտ՝ ոչ մի կոպեկ չունի աղջկան օգնելու: Փող ճարելու համար ստիպված է գրավ դնել ընկերոջ կրկնակոշիկները, որ պատահաբար հագել էր: Անսպասելի փրկություն. Մոսկվայի բարեկամները ուղարկում են 30 ռուբլի, իսկ հետո հնավաճառից գնելով մի գրասեղան՝ նա պատահաբար տեր է դառնում հսկայական հարստության: Սա մի յուրահատուկ փորձություն էր, որից Միքայելը դուրս եկավ հաղթանակով: Հայտնի փիլիսոփա Միշել Մոնտենը ասել է, թե իսկական տղամարդը նա է, ով կարող է տրորել և անցնել փողի վրայով: Փողը փորձաքար է. մարդը նրա առաջ կա՛մ մնում է մարդ, կա՛մ դառնում է գործիք: Վայելչյանը գործիք չի դառնում:

Անշուշտ, արկածային գրականությունից է վերցված պատահական գանձի տեր դառնալը: Բայց չէ՞ որ Պատկանյանը սա չի դարձրել իր վիպակի համար հիմնաքար: Սա պարզապես ծառայում է որպես միջոց՝ բացահայտելու հերոսի հոգեկերտվածքի առանձնահատկությունները:

Ինքը՝ գրողը, հստակ գիտի, որ այդ միջադեպը «շատերին անհավատալի պիտի երևի» և փորձում է նախապես արդարացնել իրեն. «Գիտեմ՝ կասկածամիտ մարդիկ այս պատմելու միջնավեպս պիտի համարեն իմ մտացածին deus ex machina-ն – այդ շատ լավ գիտեմ. բայց ի՞նչ փույթ. իրողությունը կմնա, թեկուզ անմեկնելի էլ լիներ նա մարդոց համար: Ո՞վ չգիտե Շիլլերի ասածը, թե՝ աշխարհքիս երեսին դեռևս շատ անմեկնելի գաղտնիք կան: Իմս էլ նոցա թվումը համարեցեք»[4]:

Թերևս փոքր-ինչ անհամոզիչ է գրասեղանի նկարագրությունը: Այն գոնե պետք է մի կարևոր առանձնահատկություն ունենար, որով գրավեր հերոսին, մինչդեռ նա ինքն էլ խոստովանում է. «Ճշմարիտ պետք է ասեմ, որ շատ կոպտատարազ ու անճոռնի շինված բաներ էի տեսել, բայց այս գրասեղանի նման այլանդակ բան

[1] Նույն տեղում, էջ 320:
[2] Նույն տեղում, էջ 332:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 352:

կյանքումս տեսած չէի, ինչի՞ն էի հավանել, թեկուզ մեռցնեք՝ մեկնել չեմ կարող»[1]: Մարդու բնավորության անմեկնելի էության մի լրացուցիչ ապացույց ևս:

Եվ ահա, թվում է, սիրահարները երջանիկ են: Բայց կա ինչ-որ արգելք, որը կարող է խանգարել նրանց երջանկությանը: Պատկանյանը հստակ գիտի, որ մարդու համար ամենադժվար խնդիրը իր մեջ դրված տաբուի հաղթահարումն է: Կա տաբու, կա հոգեկերտվածք: Ո՛չ Վայելչյանը, ո՛չ Մարին չեն կարող խախտել այդ ներքին տաբուն, թեև դրանով պատճառ են դառնում սեփական դժբախտության: Սա թերևս ազգային դիմագծի արտահայտություն է:

Մարին հստակ կանխազգում է, թե ինչ է իրեն սպասվում, մի քանի անգամ խնդրում է Միքայելին իրեն գողանալ. «Ինձ գողացիր, ինձ հափշտակե, ինձ փախցուր. թքե վրաս, մրե ինձ, որ մի ուրիշը տեսնե այդպես կեղտոտած՝ ինձ արհամարհե, որ ես քեզ մնամ»[2], բայց Միքայելը ևս չէր կարող հաղթահարել իր տաբուն: Դա դեմ էր իր կենսաձևին. «Բայց ի՞նչ անեի, երբ մեջս ուժ չի կար ծնողացս ներշնչած սկզբունքները հանկարծ ու այդպես կոշտ կերպով քանդելու»[3]: Սրան ավելանում է նաև Միքայելի հարգանքը, զգայուն վերաբերմունքը դեպի մարդն ընդհանրապես և դեպի կինը՝ առանձնապես. «Վա՜յ այն սերին, որի կեսը հարգանք չլինի»,- իրավացիորեն խորհրդածում է նա:

Թերևս փոքր-ինչ անհասկանալի է Մարիի պահվածքը: Նա չի համարձակվում Միքայելին ասել ճշմարտությունը. «Դորանից ավել ես քեզ ոչինչ ասել չեմ կարող. առանց նորան էլ ես քեզ ավելի ասացի, քան կարելի էր. իմ քեզ հետ խոսելս, քեզ հետ բարեկամանալս՝ արդեն մեծ ուխտադրժություն էր իմ կողմանե. իսկ այս սերը, որ ծագեցավ մեր մեջ, արդեն ինձ հավասարեցնում է ամենա... Միքայե՛լ, Միքայե՛լ, դու ինձ չես սիրում...»[4]: Իհարկե վերջում հասկանալի է դառնում Մարիի այս խոսքերի ենթատեքստը. «Ինձ կինդ առնել քո ձեռքն էր, բայց քու հարսդ լինել ես չէի կարող- ես նշանած էի»[5]: Բացատրությունը տրվեց, բայց չափազանց ուշ: Մինչդեռ, մեր կարծիքով, Մարին այդ մասին Միքայելին կարող էր հայտնել շատ ավելի վաղ, հետևաբար չէր լինի և ողբերգական ավարտը: Կարող ենք ասել, որ սյուժեի այս հատվածում որոշակի արհեստականություն կա: Այդուհանդերձ, գրողը անգամ այսպիսի իրադրություններում փորձել է բացահայտել հոգեբանական իրողություններ:

Որպես հակադրություն՝ ստեղծվում է Հովհաննեսի սիրո պատմությունը: Հովհաննեսը սիրահարվում է մի աղջկա, որի անունը ևս Մարի է: Նա շատ ավելի հասարակ ու պարզ է նայում կյանքին. սերը նրա համար վերածվել է առօրյայի: Միքայելը հակադրվում է այս տեսակին:

Վիպակում Պատկանյանը դիմում է երազի հնարանքին: Երեք երազ է նա ներկայացնում և երեքն էլ հիմնավորում է: Դրվում է ենթագիտակցության սահմանների խնդիրը: Եվ հենց երազների միջոցով ստեղծում է հոգեբանական համապատասխան մթնոլորտ: Կարծես նախապատրաստվում է մոտալուտ դժբախտությունը: Այս առումով հետաքրքիր է նաև թաշկինակի հետ կապված դրվագը: Թաշկինակի վրա ասեղնագործված M.V. տառերը հերոսները տարբեր կերպ են ընկալում: Միքայելը զարմանում է, որ իրենց անունների սկզբնատառերը նույնն են (Մարի Վեռդեռ, Միքայել Վայելչյան), մինչդեռ Մարին այդ տառերը կապում է ֆրանսերեն «Mort par venin» բառի հետ, որ նշանակում է մահ թույնից:

Մարին ինքնասպան է լինում: Պատկանյանը գիտի, որ մեռնում է անմեղությունը, տաբուն խանգարում է, որ անմեղությունը գոյանա: «Այուս օրը իմ ձեռքերով հողը դրի թշվառական աղջկա մարմինը ու իմ առաջին սերը»[6]: Եվ մենք հավատում

[1] Նույն տեղում, էջ 353:
[2] Նույն տեղում, էջ 367:
[3] Նույն տեղում, էջ 374:
[4] Նույն տեղում, էջ 367:
[5] Նույն տեղում, էջ 381:
[6] Նույն տեղում, էջ 381:

ենք Միքայելին, երբ նա աղջկա հետ թաղում է իր ունեցած ամբողջ գումարը: Չէ՞ որ այդ փողը պիտի հանգիստ ու ապահով կյանք ստեղծեր իր ու Մարիի համար:

Հարկ է նշել, որ վիպակի դիպաշարը միանգամից մի քանի գործառույթ ունի. մի կողմից միտված է հերոսների հոգեբանության բացահայտմանը, մյուս կողմից թույլ է տալիս հեղինակին առաջադրել սոցիալական որոշակի հարցադրումներ: Այս առումով հետաքրքիր է այն դրվագը, երբ Միքայելը հարցնում է Հովհաննեսին, թե արդյոք կարող է տեղի հայերից մի քանի ռուբլի կարճ ժամանակով փոխ առնել: Հովհաննեսի պատասխանը բնութագրական է. «Թեև, ղորդ է, ես ինքս էլ շատ անգամ սաստիկ կարոտության մեջ եմ եղել, բայց քաշվել եմ հայերից օգնություն խնդրելուց, և ոչ ոք էլ նոցանից կարեկցություն չի ցույց տվել իմ վիճակին, թեև հագած շորերես դժվար չէր իմանալ իմ որպիսությունը: Երևի թե սառած երկիրը ազդում է նոցա հոգու ջերմաչափին»[1]:

Նշենք նաև, որ հեղինակը երբեմն, շեղվելով թեմայից, անդրադառնում է որոշ կենսական հարցերի: Նրան հատկապես հուզել է հայ ուսանողի վիճակը: Ինչպես արդեն նշել ենք, ինքը՝ Պատկանյանը անցել է ուսանողական կյանքի բավական դժվարին ու հոգսաշատ ճանապարհ: Հետևաբար հայ ուսանողության վիճակի բարելավման հույսը չէր կարող իր արձագանքները չգտնել այս վիպակում: Գրողը նաև կոչ է անում. «Հայե՛ր, հայե՛ր, միշտ արթուն աչքով հսկեցեք ձեր արենակից աղքատ ուսանողների վրա, որոնց բախտը ձգել է Պետերբուրգ, մի՛ խաբվիք նոցա վայելուչ արտաքինեն ու ինքնագոհությամբ լի խոսքերեն. առաջինը նոցա ծաղիկ հասակի նշանն է, իսկ երկրորդը՝ նոցա ազնիվ հպարտության... Եթե ինձ հարցնեք, ես կասեմ, որ ամեն հայի վրա սուրբ պարտավորություն կա յուր կամավոր տուրքը (հայը ի բնե ողորմած է այդ աներկբայելի է) այս աստիճաններու վրա բաժանել... Ուսանողի ամենափոքրիկ պիտույք լցնելը սուրբ պարտք է ամեն մի կուշտ-փոր հայի... և ինչպես կարելի է անխնամ, երեսի վրա ձգած թողնել մեր ազգության ծաղիկները: Հայոց ուսանողությունը կամավոր ողջակեզի գառն է ազգային սեղանի համար»[2]: Մինչդեռ նրանք ծայրահեղ աղքատության մեջ էին: Եվ գրողը հանգում է կենսական ճշմարտությունների, որոնք արդիական են ոչ միայն իր, այլև բոլոր ժամանակների համար. «Ա՜խ, գարշելի աղքատություն, թեև, ինչպես ասում են, դու մոլորություն չես, բայց ամեն մոլորությունների մայրն ես»[3]:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ իր հերոսներին դնելով բարդ իրադրությունների մեջ՝ գրողը փորձում է քննել նրանց հոգեկերտվածքային առանձնահատկությունները: Իհարկե չենք կարող չնկատել վիպակի որոշակի թերությունները, մասնավորապես սյուժեի մի շարք հատվածների արհեստականությունը, որոշ գործողությունների չպատճառաբանվածությունը: Այդուհանդերձ, վիպակի գործողությունները առաջ տանելով միաժամանակ երկու պլանով՝ Պատկանյանը հանգում է հոգեբանական և սոցիալական խոր ընդհանրացումների:

Сатеник Карапетян

О ПОВЕСТИ Р. ПАТКАНЯНА "Я БЫЛ ОБРУЧЕН"

Тема нашего изучения повесть Р. Патканяна "Я был обручен", в результате исследования которого мы попробовали выявить с одной стороны автобиографические, с другой стороны, социально-психологические основы произведения.

В повести определено наличие автобиографических слоев. Автор называет повесть "Правдивые события из моего дневника" и дает имена действительных людей. Имя героя - Ваелчян, один из литературных псевдонимов Патканяна. То, что повесть

[1] Նույն տեղում, էջ 345:
[2] Նույն տեղում, էջ 358:
[3] Նույն տեղում, էջ 359:

имеет биографические слои, так же видим в том отрывке, где герой, Микаэл, от друзей из Москвы получает 30 рублей. Здесь упоминаются имена Г. К. и М. Т. Ясно, что речь идет о Геворке Кананяне и Мнацакане Тимуряне, которые являются членами Гамара-Катипы.

Следует отметить, что сюжет повести имеет одновременно несколько функций. С одной стороны, нацелено на проявление психологии героев, с другой стороны - дает возможность автору выдвинуть некоторые социальные вопросы. В статье повесть исследована именно по этим аспектам.

Ставив своих героев в затруднительное положение, автор хочет исследовать психологические особенности. Конечно, мы не можем не заметить некоторые слабые стороны повести, в частности, искусственность ряда сюжетных отрывок, неоправданность некоторых действии. И все-таки, выдвигая действия повести по двум направлениям, Патканян достигает психологических и социальных глубоких обобщений.

Satenik Karapetyan

ABOUT THE NOVEL "I WAS A FIANCE" BY RAPHAEL PATKANYAN

The issue of our study is the novel "I was a fiance" by Paphael Patkanyan, where on one hand we have tried to show the autobiographical and on the other hand the social and psychological bases of the work.

In the novel the existence of the autobiographical flakes is fairly clear. The author considers the novel true, as he speaks about real people. The name of the hero is Vayelchyan, which is one of the literary nicknames of the author. As menthioned above, the novel has biographical flakes, the proof of which we can see in the episode, when the hero Michael received thirty rubles from his friends who lived in Moscow. Here are commemorated G. C. and M. T. names. It is clear that it is about the famous members of Gamar-Catipa: George Cananyan and Mnatsakan Timuryan.

It is necessary to mention that the novel has some factors at the same time. On the one hand, it tends to reveal the psychology of the heroes and on the other hand, it let, the author show some social challenges. In the article the novel was examined whit these aspects.

Putting his heroes in difficult situations, the author tries to examine their psychological peculiarities.

Of course we can't neglect some shortcomings of the novel, especially the artificial parts of the subject, and dissonance of some actions. Nevertheless, Patkanyan comes to psychological and social generalization.